աւետարանի մէջ, 9բ. գրուած 1057 թուին, Մելիտինէ քաղաքում, Մովսէս քահանայի որդի Թովմա երէցի ձեռքով (պապկ. 30)(): Երկուսի նմանութիւնը չարագրութեան կողմից ակներև է մինչև իսկ փոքրիկ մանրամասնութիւններով, այն տարբերութեամբ միայն, որ սորա նկարիչն աւելի անկար է.



Պատկեր 31

Թիֆլիսի Մողնու աւետարանը, այժմ Երեւան. (ԺԲ. դար ?).

կան և տարբերութիւններ, որոնցով նախնականութիւնը օրինակի ծագման կողմից էջմիածնի աւետարանին պիտի տալ, որի մասին քիչ յետոյ խօսք կ'լինի:

Մի երրորդ՝ միայն խաչելութեան՝ մանրանկար ունինք Թիֆլիսի Մողնու եկեղեցու նշանաւոր աւետարանի մէջ, այժմ Երևանի թանգարանում, N 207. մեծադիր՝ 41½ × 31,8 սմ., հաստ մագաղաթ, խոշոր երկաթագիր, տարաբաղդաբար գրչութեան յիշատակարանը, ուր և թուականը պիտի լինէր, ընկած: Բայց ի նկատի ունենալով հնագրական եւ մանրանկարչական տուեալները, պնդել կարող ենք, որ ԺԱ. դարից վաղ և ԺԲ.ի վերջերից ուշ լինել կարող չէ: Տեղը չէ մեր այս ենթադրութեան հիմունքները բացատրել, բայց հէնց միայն խաչելութեան նկարագրութիւնն ու համեմատութիւնը նոյն նիւթի պատկերագրութեան հետ, բաւական է հաստատել այդ կարծիքը:

Խաչելութիւնը՝ 19ա. 36 × 24,6 սմ., կանգնած է մի գնդաձև բլրի վերայ, յետևը դաշտանկարով, խաչափայտի հիմքում Ադամի գլուխը:

Խաչելութեան երկու կողմից կանգնած են Մարիամ և Յովհաննէս իրենց տեղերում (պապկ. 31), Մարիամ հանգիստ, բարեխօսի դիրքով, աջ ձեռքը մեկնած, իսկ ձախը կրծքին. Յովհաննէս աջը ծնոտին, մտածկոտ, իսկ ձախում փաթոյթ բռնած. Մարիամ հագել է սպիտակ, մինչև ոտները հասնող, շնորհալի ծալքերով և քղանցքները ժապաւենած (?) ներքնազգեստ, իսկ վերևից մինչև ծունկները հասնող կրկնոց. գլխի լայնակի եզրները սպիտակ ժապաւէնով շրջանակուած դէմքին և պարանոցին: Ցաւի արտայայտութեան ոչ մի նշան, միայն ձախ ձեռքը կրծքին և աջը մեկնած աղօթողի կամ բա-

(1) Մեր գրչութեան Արուեստը Գ. § 53: Մանրանկարը տե՛ս եւ Macler. Miniatures arméniennes. Paris. 1913. Pl. XII. Fig. 24: